

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Ա. ՅԱՐՄԱՐԵԱՆԻ

IX

ՄԻ ՇԻՔԱՐՍՑՈՒ ԿԱՐԾԻՔ ԼԻԼԱԽԱՑԻ ՀԱՅՈՑ ԳՊԲՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Թաւրիկ 1900 ապրիլ 13.

Վաշոց ցանկանում էի Թաւրիկի Լիլաւալի հայոց դպրոցների մասին, գրելի բայց օր առուր թուաձում էի, ի նկատի առած նիւթի կարևորութիւնը, բայց երբ Ժընէւի Le Jenevois թերթում սկսեցին տպւել նամակներ նոյն դպրոցների մասին, նկարիւով որ Դքանք բաւական լրիւ և մեղ համար բնուրացն կերպով պատկերացնում են Լիլաւալի դպրոցները, վճռեցի ալդ նամակները թարգմանելով ներկաւացնել Մուրճի ընթերցողներին:

Le Jenevois-ն Ժընէւի ուսումնականների (արմադականների) օրգանն է՝ անցեալ ուսումնից Une Suissesse և Tauris (—Մի շեցարուհի Թաւրիզում) քնիչնանուր միենազրով սկսեցին տպւել նամակներ ուսման մասին Պարսկասուանում (L'instruction en Perse). Ալդ նամակներից Ա-ի կէսը, Ա- և ԱՎ-ը ամբողջապէս վերաբերում են հայոց դպրոցներին ընդհանրապէս և Լիլաւալի դպրոցին մասնաւորապէս. Մնացածը վերաբերում են թուրքերի և միսափանարների դպրոցներին. թէե այս նամակներում ընթերցուը կը պատահի շատ բաների, որոնք կը կնութիւն են մեր նախորդ նամակների այս կամ այն կէտում լիշտածի, բայց հելինակ տիկնոջ ինքնուրուն հակեացքը և այն հանգամանքը, թէ ինչպէս այս դպրոցը պատկերացրած է Շեշտարացիների առաջ, այնքան հետաքրքիր են, որ լուսով ենք ընթերցուը հաճութեամբ կը ների կրկնութիւնները.

Հեղինակն է մի Շեշտարուհի Hortense D. B., որը ինչպէս նամակներիցն էլ երևում է, Լիլաւալի դպրոցներում քրանուերէնի դասեր ունիւ-

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Հայոց դպրոցները, որոնցով այժմ մենք պիտի զբաշւենք, գոյսւթիւն ունին միայն Պարսկասփանում, ուր կառավարութեան ուած կառարեալ ազատութիւնը նրանց թուլ է տևել զարդանալու:

Հայերը մեծ կարեռութիւն են դալիս կրթութեան և այդ իրենց որդոց մարտկարարելու համար լաճախ մեծ զոհողութիւններ են անուամ Այդ պատճառով, ուր որ հայեր կան Պարսկասփանում, նոյն խոկ որուել սակաւաթիւ էլ են, նրանք ունին իրենց դպրոցը: Հայոց դպրոցներ կան ոչ միայն քաղաքներում, ինչպէս՝ Թաւրիզ, Ֆէհրան, Սպահան, Արդարիւ, այլ և բազմաթիւ գիւղերում:

Այս դպրոցներն ամբողջապէս պահում է ժողովուրդը, այն պարճառով, որ, պիտի գիտենալ, կառավարութիւնը ոչնչով մէջ չի խառնւում, թէն լրիւ ազատութիւն է դալիս կրթական հիմնարկութիւններ բանալու: Քաղաքների մեծ դպրոցներն, ինչպէս Թաւրիզին է, դալիս են 6 և 8 դաշտաւակ մի դասընթացք, ունին ընդհանրապէս դրամագլուխ՝ կաղմաւծ կամ կրակներից կամ հարուատ հայերի նւէրներից: Այս դրամագլուխը դրւած է բոկոսով, և շահը ծառակում է դարեկան ծախքի մի մասը ծածկելուն, ուսուցիչների վարձին, կարասիքի վերանորոգութեան և կարկարանին և այլն: Այս դրամագլուխը սրացւած հասրադուն գումարի հետ միասին դպրոցը տնի ուրիշ աղբիւներ արդիւնքների, որոնք ծածկում են ծախսը, որը միշտ բաւական նշանաւոր է: Կողմնակի արդիւնքներն են — թոշակը, դպրոցական առարկաների վաճառումը փոփոք օգուտով, բարեհաճ սիրուների կողմից դարւակ ընթացքում դրւած ներկայացումների արդիւնքը, ձեռագործների վաճառումը և այլն:

Գիւղերի դպրոցները, որոնք ի հարկէ շատ պակաս ծախք ունին, ընդհանրապէս դրամագլուխ չունին, և ժողովուրդն է, որ նւէրներով և հանգանակութեամբ ծախսերը ծածկում է: Խրաքանչիւր դարի մի նոր հրաշք է հարկաւոր լրացնելու համար անհրաժեշտ գումարը ուսուցիչների ուոճիկը վճարելու, մի շատ համեստ ուոճիկ սակալն, որովհետեւ դա լինում է դարեկան 10-ից 100 թուման մի գումար (200—500 ֆրանկ): Ապա կազմակերպի ծախս, դպրոցական կարասիքի պահպանման, աղջառ աշակերտներին դրբեր և այլ դպրոցական առարկաներ գնելու: և խեղճ գիւղացիները մուշ արժանիք ունին, որ, չնայելով դրան, չեն լուսահագում և գործին պինդ կապած են: Յաճախ ուոճիկ մասը վարժապետին վճարում է մթերքով: ալսպէս՝ նա սրանում է ալիւր իւր դարեկան գործածութեան համար և ցախս իւր վառելիքի համար: Պարահում է, որ դիւղերում նրան երբեմն դրւում է և բնակարան:

Դպրոցները ժողովրդի սեփականութիւնն են և համայնքի իւրաքանչյւր անդամը իրաւունք ունի նորա արդիմաքները կառավարելու, նրա ծախքերը կանոնաւորելու, Բաց գործը հեշտացնելու համար՝ հինգ կամ վեց անդամով մի մասնաժողով է¹ ընդուած ամենահարուստներից. և ահա այս մասնաժողովին է, որ ժողովուրդը լանձնել է իւր իրաւունքները և դպրոցների բնորսական կառավարութիւնը. Այս մասնաժողովը ընդուած է երեք դարով, և իւրաքանչյւր բնակիչ կարող է ընդուած լինել. իւրաքանչյւր մարդ, սկսած քսան դարեկանից, իրաւունք ունի ձախ դարու. Այս մասնաժողովն է, որ որոշում է դարեկան բիջէն և փնդրում է միջոցներ բացը ծածկելու եթէ կայ, որ համարեա միշտ պարահում է. Սա է, որ հրաւիրում է ուսուցիչ գիւղերում և դեսուչ մի քանի դասարան ունեցող ուսումնարաններում. Այս դեպքում դեսչն է մնում անհրաժեշտ ուսուցիչներ վարձելու խնդիրը համեմար նրա դրամադրութեան դակ դըրած բիջէի.

Մասնաժողովը կառավարում է դրամագլուխները, նրանց արդիմաքը սփանում է և վճարում բոլոր ծախսերը. Սրա անդամները ոչ մի վարձառութիւն չեն սփանում. Սա երբեմն շատ աշխատանք ունի անելու, որ իւր հաշիւները վակիի, և չնայելով զանազան աղբիւրներին, որդելից նա օգուել է, դարձեալ բաց է մնում լրացնելու. Հարկաւոր է հանգանակութիւն անել ժողովրդի մէջ, որը չաճախ արդէն վճարել է իւր բաժինը. ապա դիմում են կողիսաի հարուստ վաճառականներին, գրում են, ուշարկում են սպարդամարդներ և վերջացնում են միշտ բացերը ծածկելով առանց դիպելու դրամագլխին, որից ամեն կերպ աշխատում են խոլս դալ:

II

Ուսուցումը ձրի չէ էլ կարող լինել համեմար ախ բոլորի, որ դուք դեսաք, ի նկատի առած համեմարաբար նշանաւոր ծախսերը, սփացւած թոշակը սակայն շատ քիչ է. իսկ չքատոր աշակերտները վճարում են թոշակի կեսը, քառորդը միան, կամ նորոշիսկ ընդունում են առանց որևէ վճարի, եթէ ծնողների չքատորութիւնը կատարեալ է. Դպրոցը զնում և վաճառում է դպրոցական իրենէնները. այս վաճառումից սփացւում է մի թեթև օգուոր. Զըգճարու աշակերտները նորապէս ձրի են սփանում իրենց դասարանական առարկաները ամբողջ դպրոցական դարւակ ընթացքում:

Պարսկասպանի հարց դպրոցների և նրանց կադմակերպութեան վրայ այս թեթև դեսութիւնից չետու, ալժմ մանրամասն քննենք այս դպրոցներից մինչը. Թագրիզի երկու դպրոցներից մինն է, որը ևս կամենում եմ այսուել նկարագրել.

¹ Խօսքը հոգաբարձութեան մասին է. Ծ. թ.

Թաւրիզը իւր 5-ից 7000 հաւերով⁹⁾ պահում է երկու տարրական դպրոց, երկու մանկապարտէզ, երկու կարուձնի արհեստանոց։

Թաւրիզի հաերը բաժանւած են երկու թաղի, որոնք փակւած են քաղմաթիւ թուրք թաղերի մէջ և իրարից մօրաւորապէս մի քիլոմէտր հեռաւորութիւն ունին։ Սոն երկու թաղերը ազգաբնակութեամբ հաւասար չեն։ Լիլաւա թաղը աւելի բազմամարդ է, և սրա դպրոցի մասին է, որ ես կամենում եմ ձեզ խօսել։ Երկրորդ թաղը, Ղալան, երկու դասսարան աւելի է պահում, որովհետեւ նրա դպրոցը աւելի հարուստ է,

Չորս տարի է որ երկու թաղումն էլ բացել են մանկապարտէզ, ուր ընդունում են փոքրիկ աշակերտներ 4-ից 7 տարեկան, 2 զամ և թուման թոշակով (10 կամ 20 ֆրանկ.) լիլաւափ մանկապարտէզը երեք փարի ունեցել է մի ընդուր ուսուցչունի, և չնորհիւ այս դեսակ կառավարչի նախամեննին լեռ չեր մնալ մներ (=չէցարական) մանկապարտէզներից։ Մենք չենք կանգ առնի սանկապարտէզի վրա։ Աս կը սահմանափակւմ ասելով, որ սա հիմնած է Թաւրիզի Հայուհուեաց Բարեգործական Ընկերութեան ձեռքով, որը ինքն է նրան կառավարում և ծախսերը հոգում։ Մանկապարտէզ ընդունում են միջին թուր 40 եւ եխալ, որոնց չքառորդ մասը ամեններ թոշակ չի վճարում։

Տարրական դպրոցը, ուր ընդունում են երկուսեռից աշակերտներ սկսած 7 տարեկանից, վեց տարւակ դասւնթացք ունի. Առաջին և երկրորդ տարբիւրը խառն են, և հարց կաէ լաջորդ տարին միացնել նաև երկրորդ տարւակ դաշներին ու աջիկներին և այն ձեռվ կազմել խառն դասարաններ Առանց դժւարութեան չեղաւ երկու սեռից երեխանների միացումը և հասարակութեար կար ժամանակ դժգոհում էր, որովհետեւ ալսուել Արևելքը էի աղջում է բարքերի վրա։ և առանց դժւարութեան չէ, որ խելօք ու լուսաւորւած մարդիկ լաջուցնում են մի քիչ ընդարձակել այն շրջանը, ուր սահմանափակած է թուր սեռը և համոզել ժողովրդին, որ երկու սեռից երեխանների միացումը կարող է ունենալ միան գերազանց հերեանքներ։

Աշակերտների թիւը 270 է, թոշակը ուարեկան 4 թուման է (20 ֆր.) աշակերտների բաւական մեծ մասը ձրիէ սպանում կրթութիւն, 12 դասարան կաէ, որոնցից երկուսը խառն է, 5-ը ալջիկների, իսկ 5-ը դաշների։ Ուսման ուղղութիւնը կազմւած է ներկաւ մանկապարտութեան բոլորովին համապատասխան ձեռքով։ Հիմիկաւ դեսուչը, մի՞շար կրթւած մարդ, իւր ուսամբ աւարդած է բերլինում¹⁾, դպրոցը կառավարում է հմուտ ձեռքով

⁹⁾ Ըստ վիճակաւոր առաջնորդի տեղեկադրութեան (1898թ.). Թաւրիզը ունիր 3.800 հաէ բնակիչ, Ծան. Մուրճի խոր.

¹⁾ Ոչ թէ Բերլինում, ալլ Ենալում. Ռ. Թ.

և աւանդում բնագիրութեան դասեր երեք բարձր դարիներում, Ուսուցիչները և ուսուցչուհիները թով 12 են. և ոչ թէ իւրաքանչիւրը մի դասարան ունի կառավարելու, ալ մի կամ մի քանի առարկակ ուսուցանելու հերթով զանազան դասարաններում. Սա իսկապէս շատ առաւել է մեր (==շէցարական) մեթոդից, որը միայն մի ուսուցչի է լանձնում մի դասարան կառավարել, ուր նա երբեմն պիտի աւանդէ 8-ից 9 առարկակ, որոնք նա չի կարող, հակառակ իւր ցանկութեան՝ ուսումնասիրել իւրաքանչիւրը մասնաւորապէս, ինչպէս նա կանէր, եթէ ունենար միայն մինը կամ երկուաը.

Մեր լիլաւագի դպրոցում, օրինակ, մի ուսուցիչ դալլս է հաջոց լեզւի դասեր երկու սորորին դարիների չորս դասարաններում, մի ուրիշը սովորեցնում է թւարանութիւն, երրորդը ընդհանուր պարուժութիւնն Բայցի այս ընդհանուր զարդացման առարկաները, ալսինքն՝ մալրենի լեզու, թւարանութիւն, աշխարհագրութիւն, ձեռագործութիւն—դրաները երեք բարձր դարիների ընթացքում սովորում են նաև երեք օրար լեզու, երեքն էլ վաճառական դասի համար անհաժեշտ՝ պարսկերէն, ուռասերէն և ֆրանսաերէն, ևս ունիմ շաբաթական դասը դաս Փրանսերէնից դրաների երեք բարձր դարիներում, իւրաքանչիւր ուսուցչի աւանդած դասերի քանակութիւնը միջին թւով շաբաթական 23-ից 26 է.

Դասեր լինում են ամենայն օր, նույն իսկ հինգչաթթի օրերը, և ոչ ինչպէս մեզանում¹, Բայց դրա փոխարէն դառերի տեսողութիւնը բաժանւած է շատ աւելի խելացի և մանկավարժութեան համապատասխան կերպով:

Առաջին դարին միայն 18 դաս ունի շաբաթական (օրական 3 դաս.) և իւրաքանչիւր դասը տեսում է միայն կէս ժամ, 20 րոպէ դասամիջոցներով², Երկրորդ դարւանից սկսած դասերը տեսում են երեք քառորդ ժամ՝ և ընդհարւամ են 15 րոպէ դասամիջոցով։ Ամառաւակ առաւօդների մեր և երկար դասերը, ընդհարւած միայն կէս ժամ դասամիջոցով, չափազանց զոդնեցուցիչ են ուսուցիչների և աշակերտների համար, և ուսումը շատ աւելի կօգտւէր, ես համոզած եմ, եթէ ենթարկելու դասերի այս ուշեմին—դասերի ամենաշատը երեք քառորդ ժամ տեսողութեամբ և կարճ դասամիջոցներով։ Այս մեթոդը գործ է դրւում մեացածքուոր դեշերում կուլիչնում, օրիորդաց գիմնազիալում (ecole secondaire), և աւելի մեծ իրաւունքով պիտի գործադրւած լինի մեր ուարրական դպրոցներում, ուր աշակերտները, որքան փաքը են, այնքան աւելի կարիք ունին դասամիջոցներում ընդհարւած կարճ դասեր ունենալու։ Ինչ նահարակութիւն է ա-

¹ Շեցարական դպրոցներում, կիրակիներից զար, հինգչաթթի օրերն էլ դասեր չեն լինում. դա կոչում է petit dimanche—(փոքր կիրակի)

Ծ. թ.

² Ոչ թէ 20 րոպէ, ալ կէս ժամ դասամիջոցներով։

ուաջին դարւաչ խեղճերի համար, որոնք գալիս են մանկապարուէզից, ուրկէս ժամ ուսող դասերը ընդհափում են խաւերով, երգերով, մարմնամարզական քալիքը և որոնք պիտի երբեմն մնան անշարժ երկու երկարժամ և լսեն ձանձրալի դասը, ևս ասում եմ ձանձրալի, որովհետեւ դասերը նրանց ալնպէս պիտի թւան մանկապարուէզի դասերից լեփու և եթէ օրական 6 ժամ դասի փոխարէն նրանց դաշին միմիան կէսը, ընդհափելով իւրաքանչիւր չ, ժամը մը դասամիջոցով, ևս համոզւած եմ, որ հետեանքները պակաս չեն լինի, և երեխաները աւելի առողջ կը լինէին.

Դառնանք մեր Լելաւաի դպրոցներին, Երկրորդ տարին ունի 20 դաս, երրորդը 22, չորրորդը 24, և միան հինգերորդ և վեցերորդ տարիներն են, ուր աշակերտները ունին օրական 5 դաս ամենաշատը, որից չեն անցնում. Առաջին երկու դարիները ոչ դաս, ոչ էլ գրաւոր պարապմունք ունին դանը կատարելու. երրորդ դարին ունի միաչն բանաւոր դասեր պարապմունք, ապա երեք բարձր դասարաններին դրում է ինդիբներ և դասեր քիչ քանակութեամբ:

Ամբողջ ուսուցչական խումբը, բաշկացած 10 ուսուցիչց և 2 ուսուցչունուց, բոլոր ուժով աշխատում է ուսմանը դալ մի խելացի և իսկապէս մանկավարժական ուղղութիւն:

Օդար լեզուները աւանդում են դիտողական մեթոդով և առանց մազենի լեզուի օգնութեան, բացի հազարիւր բացարրութիւններից և երր աշակերտները արդէն ունին մի նշանաւոր պաշար բառերի, գալափարների և օճերի. Այդ մեթոդը, որ աշխատում է երեխանին դնել այն վիճակի մէջ, որում նա գոյնում էր իւր սեփական լեզուն սովորելիս, և առարկալի անունը դալիս է անմիջապէս այն լեզուվ, որը ցանկանում է սովորեցնել, առաջացնում է գերազանց հետեանքներ:

Ահա շուրջով երկու դարի կը լինի, որ ես փորձում եմ ֆրանսերէնը ալս ձեռով, և իմ փաքրիկ աշակերտները կարողանում են թեթև խօսակցութիւն անել որոշ քանակութեամբ նիւթերի մասին—իրենց լրջապարոշ առարկաների, դասարանի և օրւագ աշխատանքների, դան, ժամանակի, եղանակների, հագուստների, արհեստների մասին և ազն. Դասագիրքը ամբողջապէս ֆրանսերէն է, և իսկապէս ասած քերականութեան դասերչկան, քերականութիւնը, ուղղագրութիւնը, սրանց կանոնները և բացառութիւնները, ալս բոլորը սովորում են խօսակցութիւնների ընթացքում. Աշակերտները ի հարկէ գրում են. և իւրաքանչիւր խօսակցութիւն ամփոփում է մի փոքրիկ պատմութեան մէջ, որը հերզէներէ դասնում է երկար և բարդ, նացելով թէ որքան երեխաները հերզէներէ տիրապետում են լեզուին, ևս համոզւած եմ, որ մի աշուպիսի մեթոդ, եթէ շարունակւի և կամ 5 դարի, աշակերտներին կը հասցնի ախտել, որ վարժ կարփակագեն իրենց մրգերը իւրաքանչիւր օդար լեզուվ, և շատ աւելի լաւ, քան աչդ-

անում են ազարւակ թշւառ աշակերտները, որոնց սպանում են թեմաների և թարգմանութիւնների միջոցով և անդիր անել ուղղով կանոններ և անհուն բառերի սինակներ, որոնք նրանց բոլորովին չեն հետաքրքրում, որովհետև ոչ մի չարաբերութիւն չունին կեանքի հետ, քանի որ նրանք համարեա երբէք առիթ չունին նրանց գործածելու մի սովորական խօսակցութեան մէջ:

Բոլոր միւս առարկաներն էլ ձգուում են նոյն նպատակին—ուսումից սուելծել մի դուրեկան և ոչ թէ ձանձրալի բան և կրթել երեխաներին՝ քայլ առ քայլ հետելով նրանց զարգացման, Աշակերտին իրեն գորնել ուղարկ ինչ որ ցանկանում են նրան սովորեցնել որպէս զի սա դառնաչ նրա հարստութիւնը, նրա սեփականութիւնը և որպէս զի նա բոլորովին ըլ մոռանալ:

Շաբաթը մի անգամ և հերթով ուսուցիչներից մինը կամ միւսը իւր առարկալից դաս է դալիս, որին ներկաւ է լինում ամբողջ ուսուցչական խումբը: Ապա ժողովում են և մոտերմաքար խօսում են այս դասի մասին, Նկարութիւններ են լինում, դիցութութիւններ են անուում, հարցեր են դրուում, ալդդեղից ծնուում է մի վէճ, որից լուս է հոսում, մի վէճ պառուղներով լի, որի մէջ ամեն մարդ սովորելու բան է գոնում: Ե այս դասերը աշակցում են դասաւանդութեան կարաբելազգործւելուն, ցուց ուղղով սիսալները, սկակասը. նունպէս լաւ բան, որից կարելի է օգուտ քաղել:

Բացի այս ընկերական հաւաքումներից կալ նաև իւրաքանչիւր շաբաթ մի մանկավարժական ժողով դեսչի նախագահութեամբ, ուր արձարձուում են բազմաթիւ ընդհանուր և մասնաւոր խնդիրներ, որոնք որեւէ ձևով կապ ունին ուսաւան հետ:

III

Հայ ժողովուրդը, որ կրթութեան համար մշտական և նշանաւոր զոհութիւններ է անում, իրաւունք ունի գիտենալու, թէ ինչպէս են կառավարում այն դպրոցները, որ ինքն է պահում: Այդ պատճառով դպրոցները միշտ բաց են, և համայնքի իւրաքանչիւր անդամը կարող է ներկաւ լինել դասերին: Սական որպէս զի այս ացելութիւնները անկարոգութիւն չառաջացնեն դասաւանդութեան մէջ, որ կը խանգարէի այս շարունակական գնալ զալու պարճառով, նշանակւած է մասնաւորապէս դպրոցական տարւակ մի շրջան, երբ դպրոցի ընթացքով հերաքրքրուշ անձնաւորութիւնները հրաւիրում են դասերին ներկաւ լինելու: Սա դարւակ վերջին ամիսն է, մայիսը, երբ դասերը հրապարակական են լինում¹:

¹ Ոչ միայն մալիս ամսին, ալլ ամբողջ դպրոցական դարւակ ընթացքում ցանկացողների համար դպրոցի դուռը բաց է. բաց աւելի լաճախում են մայիսին.

Վերջին տարին շաբերը արձագանք ուկին ալս կոչին և, մի արժակարգ քան, եղնում էին կանաչք, որոնք մինչև ալդ ժամանակ դանից դուրս էին գալիս միան իրենց սեռի մի անձ ալցելելու համար, նստում էին գպրոցական նստարանների վրայ և հետաքրքրութեամբ լսում էին դասերը:

Այս հրապարակական դասերը օգուակար կերպով փոխարինել են հրապարակական քննութիւններին, որոնք տեղի էին ունենում մինչև վերջին դարին հարոց դպրոցներում, որոնք դպրոցի ընթացքի և ուսուցիչների դասաւանդութեան մասին շատ պակաս հաւաքարիմ պարկեր էին դալիս: Մի հարածով մենք մի արմատական փոփոխութիւն արինք, որը առաջացրեց բարձր ալաջակներ շատ մարդկանց կողմից: մենք ամբողջապէս վերացրինք քննութիւնները, Շատ մանկավարժական ժողովներ ունենալուց էերու, որոնց ընթացքում լուրջ կերպով քնննելով ալս նշանաւոր հարցը, մենք բոլորս չուղով համաձանցեցինք վերջնական քննութեան անօգուր լինելուն, եթէ աւելին չասենք, և հակածառութիւնները, որոնցից ամենամեծն էր «զբայի պէտ սուրբ ոռութիւնավիճ», իսկո՞ն ընկան դարովութեան առաջ (devant la raison).

Ինչ վերաբերում է փոխադրութիւններին, մենք կափարեցինք հետեւալ ձեռով: իւրաքանչիւր ուսուցիչ դւեց իւր գրաւոր գնահարութիւնը իւրաքանչիւր աշակերտի մասին: Եւ այդ գնահարութիւնների հերեանքով ընդհանուր ժողովում որոշեց աշակերտների փոխադրութիւնը:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ թւանշանների մեթոդ ամբողջապէս արգելած է մեր դպրոցում: Ոչ մի թւանշան, և աշակերտները դրան գարժեւել են, ոչ թէ 6 կամ 10 սունալու համար¹, ալ իրենց ուսուցիչներին բաւականութիւն պարֆառելու համար: Նոյնպէս որովհերեւ մենք կարողացել ենք նրանց համար աշխատանքը բաւականաչափ դուրսկած դարձնել, առանց նրան համեմելու, մեծ կամ փոքր թւանշանով:

Միան իւրաքանչիւր ուսուցիչ ամեն մի աշակերտի իւրաքանչիւր քառամսեակի վերջը որոշում է հետեւալ նշաններից մինով թուլ, բաւարար և լաւ Այս նշանները գրում են մի լատուկ մարտեանում և աշակերտներին չեն հաշորդում: Սրանք ծառաբում են միան փոխադրութիւնները որոշելու համար և մնում են դպրոցական արխիւում: Դրանք կարող են միան ցոյց որւել ծնողներին եթէ նրանք խնդրում են, և լամենան դէպօտ դեսուցը լաւունում է այն առարկաները որից թուլ է նրանց որդին: որպէս զի նրանք կարողանան մասնաւոր ուշադրութիւն դարձնել Այս ձեռով կադարւած փոխադրութիւնները, հիմնւած հանդարար մուտեալ դըրւած և ամբովլ դարւալ աշխատանքը ամփոփու նշանների վրա, շատ

¹ Հեքարիակում թւանշանների սիրէմներից դորժ է դրւում 1-ից մինչև 6-ը և 1-ից մինչև 10-ը.

աւելի ճիշտ են, քան նրանք որոնք քննութեան հետեանք են, ուր պարագանունքը կանախ մեծ դէր է կարարում և ուր աւելի արժանաւոր աշակերտները անվաջողութեան են հանդիպում կամ քաշելուց կամ բանկարծակի մոռանալուց:

1898—99 դպրոցական դարին մենք վերջացրինք թաւրիզում մինչև այդ ժամանակ չեմ տեսնած բանով՝ դպրոցական հանդէսով („promotion“) ժըննական ձեռով Ռինչ պակաս չէր, մեր դպրոցի բակը զարդարած էր կանաչ գիրկեանդներով, լալթական կամարներով, որոնք բարձրացել էին դպրոցական փոքրիկ ժողովրդին բարի զալուստ մաշթու դէւիզներով¹. բոլոր լուսամուֆներում ծածանում էին դրօշակներ, նրգեր որանաւորներ, մի փոքրիկ մանկական ներկաւացում, մարմնամարզական քալւածքներ, խա. շեր չաջորդում էին իրար ամբողջ կէս օրից ինուու, և երբ տանը վերջացաւ դոպրակների խալով², ոգեսրութիւնը հասաւ իր գագաթնակէտին և մեծ ու փոքր վերադարձն հիացած:

Առաւորը տեղի ունեցաւ լուրջ մասը, ուր մուրք ունէին միայն ծնողները և ուր դպրոցական մասնաժողովը կարդաց իւր հաշիւը, Ապա դեսուը կարդաց տեղեկագիր դպրոցի ընթացքի մասին և չափնեց վերջնական հերեանքներ.

Այսքան ախորժելի հանդէս տեղի ունեցաւ լունիսի առաջին երկու օրը, որից ինուու աշակերդները երեք ամսով իրար հրաժեշտ ուին, որովհետո ամառաւ արձակուրդը ախորեղ տեսում է մագիսի վերջից մինչև աեալումբեր, քանի որ մեծ շոգերին աշքարանքը անկարելի է։ Այս երեք ամսուակ ընթացքում բոլոր աշխատանքը ընդհարուում է, ուսուցիչները գնուում են իրենց արժանի հանդիսով վայելելու իրենց ընդհանիքների մէջ կովկասում, առաջներն ունենալով 8—10 օրւակ ճանապարհ ալրող արենի դակ ձիու վրա կամ բաց կառքի մէջ նորած, և նոյն քան ժամանակ էլ վերադարձի համար, եթէ հրաւիրած են լաջորդ դարւակ համար։

Այս ճանապարհորդութիւնը, որից ոչ ոք չի ուզում իւր միայն կառանում է համեստ ոռունի մի նշանաւոր մասը։ Հարկաւոր է հաշւել չ0—100 ռուբլի ալր ճանապարհորդութեան համար, դրա մէջ հաշւած նաև իւսուասուանի անցագիրը, որն արդէն արժէ 20 ռուբլի (50 ֆրանկից աւելի), Ասեմ նաև, որ երիտասարդ պարոնները, որոնք համաձաւնում են թաւրիզ գալ ուսուցչութեան, շահի լուսով չեն անում ալդ, որովհերեւ նրանք կովկասում կաշխատէին 400 կամ 500 ռուբլուց աւելի, որը ակտեղ են սպանում։

¹ Ծալիկներով գրւած էր «Ով կարդաւ նա մարդ առ, և պարդա, ան իմ խելօք մանուկ», Ծ. Թ.

² Մի մանկական խալ է, Ծ. Թ.

Վարձառութիւն նշանակուում է դասերի տեսակի¹ և թւլի համեմատք առանց սերի խտրութեան, 300—600 ռուբլի (800—1.600 ֆրանկ.) ինչպէս արդէն ասել եւ դպրոցը շատ սահմանափակ մէջոցներ ունի և չի կարու իւր ուսուցիչներին աւելի բարձր ուսնիկներ տալ:

Հայոց դպրոցների մասին այս հայեացքը վերջացնելու համար ես կամենում եմ ձեզ մի խօսք ասել մեր դպրոցական շինութեան մասին, նաև կառուցւած է Լիլաւա թաղի կենարոնում և պարունակում է շինութեան երկու ընդարձակ մասեր իրարից բաժանւած մի բաւական մեծ բակով որի մէջբեղը գտնւում է թաղի եկեղեցին, Շինութիւններից մինը, որը բոնւած է ուղաների դասարաններով, բաւական չին է, Դասարանները սական ընդարձակ են, իսկ առասորաշները բաւական բարձր: Նա նայում է դէպի հարաւ, և իւրաքանչիւր դասարանը լուսաւորում է չորս լուսամուղով: Տաների դպրոցը պարունակում է բացի այդ մի սենեակ՝ նշանակւած ուսուցիչների համար, և թաղի հասարակական գրադարանը: Ալջիկներինը չորս տարւայ մի չքեղ շինութիւն է, կառուցւած Թաւրիզում ծնւած մի հայի ձեռքով, որը նւիրել է համաչնքին: Ցածի լարկում պարունակում են 6 ընդարձակ և լաւ լուսաւորւած դասարաններ, մի սենեակ, որը միաժամանակ ծառալում է իբրև աշխարհագրութեան սենեակ, ուր կախւած են քարուէզներ, և դպրոցի զրադարանը:

Վերի լարկը բոնւած է մանկապարտէզով կար ու ձեի արհեստանոցով՝ 6 տարւաէ լնդացքը աւարտած աջիկների համար, և մի լնդարձակ՝ դահլիճով ժողովների համար, մի բեմով, ուր տեղի են ունենում հրապարակական ձրի դասախոսութիւններ ամեն շաբաթ և ներկաչացումներ, կամ գրական ու երաժշտական երեկոներ տարին երկու կամ երեք անգամ:

Երկու չարկերն էլ ունին ընդարձակ միջանցքներ, որոնք անձրև ժամանակ դասամիջոցներին խաղալու են ծառալում: Մի քարած փոքրիկ բակ կամ շինութեան խորեւում: Դպրոցի դասիակ կոռուրից, ինչպէս Թաւրիզի բոլոր կոռուրներն են, որը իշխում է բոլոր շրջակաւ շինութիւնների վրա, մարդ հիանում է մի սքանչելի տեսարանով, և մարդի հայեացքը դարձւում է քաղաքի անթիւ դների ու պարուզների վրա, մինչև Ուրմիու լիճը, որ կապուն է տալիս հիւսիս-արևմորեան կողմում, մինչդեռ դրա հակառակ կումը Սահանդը բարձրացնում է իր եօթ գագաթները արեւելքի փալուն երկնքի կապուրակի վրա:

¹ Վարձառութեան մէջ նշանակութիւն ունի ոչ միայն դասերի տեսակը, այլ և ուսուցիչ զարգացման ասդիճանը.